ՋԱՈՒԱՐԻ ՀԱՋԻԵ ՋՆԴԻ

Քրդագիտությունը կորցրեց իր նվիրյալին։ 1990 թ. ապրիլին վախճանվեց Հաջիե Ջընդին, որն իր ողջ կյանքը ի սպաս դրեց հարաղատ ժողովրդի բանահյուսական ու գրական արժեքների մշակմանը, թողեց գիտական մեծ ժառանգություն, որը լուրջ համարում ունի ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։ Հ. Ջնդին ծնվել է 1908 թ. Կարսի մարզի Ցամանչայիր գյուղում։ 1918 թ. Կարսի հայերի և եզիդի-քրդերի հետ թուրքական յաթաղանից փրկվելով՝ ընտանիքով գաղթում է Արևելյան Հայաստան, ճանապարհին կորցնում է ծնողներին և հայ որբերի հետ միասին կիսում նրանց դառը ճակատագիրը։

20—30-ական թվականներին խորհրդային Հայաստանում քրդական ազգային մշակույթի համար ստեղծված պայմանները բարենպաստ էին Հ. Ջնդիի մտավոր կարողությունների զարգացման համար։ Արդեն իսկ ուսումնարանում և համալսարանական տարիներին նա ակտիվորեն մասնակցում էր քրդերենի դասավանդման, դասագրքեր կազմելու և հարաղատ ժողովրդի լեզվի ու գրականության հարցերի մշակման աշխատանքներին։

Հաղվագեպ աշխատասիրությունը և անմնացորդ նվիրվածությունը իր գործին ապահովեցին Հաջիե Ջնդիի գիտական մեծ ժառանգությունը, որի մեջ առանձնապես նշանակալից է քրդական ժողովրդական բանահյուսության հավաքագրման ու մշակման նրա անդնահատելի վաստակը՝ թե ընդգրկման լայնքով, թե արժեքով։ Գրական գործերի՝ պիեսների, վիպակների, պատմվածքների, վեպերի հետ միասին վաստակաշատ գիտնականը կազմեց մեծ թվով քրդերեն դասագրքեր, այբբենարան՝ իր տասը հրատարակություններով։ Հ. Ջնդին իրավամբ համարվում է քրդական ժողովրդական բանահյուսության խոշորագույն մասնագետը։ Քրդական ինքնատիպ և բազմահարուստ բանահյուսության մասնագետները երախտագիտությամբ կհիշեն նրա մեծածավալ ու արժեքավոր այնպիսի աշխատությունները, ինչպիսիք են՝ «Քրդական ֆոլկլորը» (1936), «Քրդական ժողովրդական հեքիաթներ» բազմահատորյակը (1961—1987), «Ռոստամ Զալ» էպոսի քրդական պատումները» (1977), ստվարածավալ «Քրդական ժողովրդական առածներ և ասացվածքները» (1987) և այլն։ Հաջիե Ջնդին թողել է գիտական հետաքրքիր մի շարք այլ ուսումնասիրություններ. հիշարժան են «Շեքսպիրը և քուրդ իրականությունը» (1975), «Ն. Մառը և քրդագիտությունը» (1948), «Լև Տոլստոյը քրդերի մասին» (1953), «Պուշկինը քրդական դրականության մեջ» (1949)։ Շուրջ 150 աշխատանքների հեղինակը առանձնահատուկ տեղ էր տալիս հայ-քրդական բանահյուսության, գրական և այլ կապերին [«Խ. Աբովյանը քրդական ֆոլկլորի մասին» (1948), «Հովհ. Թումանյանը քրդերի մասին և քրդական գրականության մեջ» (1961), «Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը ժողովրդական բանահյուսության մեջ» (1965), «Մեսրոպյան գրերը և քրդական մշակույթը» (1962) և այլն]։

Հ. Ջնդին քրդերեն է թարգմանել Գ. Սունդուկյանին, Ալ. Շիրվանզադեին, Վ. Փափազյանին, Դ. Դեմիրճյանին, Ավ. Իսահակյանին, Սայաթ-Նովային և շատ ուրիշների։ Նա անհուն երախտագիտության զգացում ուներ հայ մտավորականության և հատկապես նրա մեծերի նկատմամբ։ Այդ կապվածությունը և վարձահատույց լինելու անկեղծ պատրաստակամությունը աննկատ չի մնացել և, թերևս դա պատճառներից մեկն է, որ Հ. Ջնդին բարձր

լին գնահատում հայ նշանավոր մտավորականները, գրողներն ու բանաստեղծները։ Իր երկերի ժողովածուն Ավ. Իսահակյանը Հ. Ջնդիին է նվիրել հետևյալ ընծայականով. «Սիրելի ընկեր Հ. Ջնդիին՝ լավագույն ապագայի արժանի քուրդ եղբայրական ժողովրդի լավագույն, անձնվեր մշակին։ Հովհաննես Շիրազը «Սիամանթո և Խչեղարեա» պոեմը «բազմահմուտ գիտնականին» է նվիրել նրան բնութագրող բանաստեղծական խոսքով.

Աղնիվ հոգի է Հաջիե Ջնդին,
Ոսկի կամուրջ է իրենց և մեր մեջ,—
Քուրդ Արովյանն է, անմահ է Ջնդին,
Կանթեղ է անունն հավիտյան անշեջ՝
Իմ Արագածի կանթեղի նման,—
Եկ, լույս տանք մինչև Սրմանց և Սիփան...

1937 թ. Հ. Ջնդին ենթարկվեց ռեպրեսիայի։ Նրան սպառնացող հաշվեհարդարը կանխվեց հայ մտավորականների, մասնավորապես Հ. Քոչարի եռանդուն ջանքերով։ Հիրավի, հարազատ ժողովրդի մեջ մեծ սեր և հարգանք վայելող գործիչը ակնառու հեղինակություն ուներ նաև հայ մտավորականության և ընթերցող հասարակայնության լայն շրջաններում։ Գիտությանը մատուցած մեծ ծառայությունների համար նրան գիտության դոկտորի աստիճան է շնորհվել առանց դիսերտացիայի պաշտպանության։ Պրոֆեսոր էր, Հայկ. ԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, Իրաքի ԳԱ թղթակից անդամ, Փարիզի քրդական ուսումնասիրությունների և մշակույթի ինստիտուտի հիմնադիր անդամ։ Պարգևատրվել էր մի շարք շքանշաններով և պատվոգրերով։

Հ. Ջնդին անհատականություն էր բառիս իսկական իմաստով, և այդ անհատականությունը դրսևորվում էր իր գործին մոլեռանդ նվիրվածությամբ ու բացառիկ աշխատասիրությամբ, ճշմարտությանը և ճշտապահությանը, տրված խոսքին հավատարիմ մնալու ներքնապես հատուկ մի կամքով։ 30—50-ական թվականների բարդ և դրամատիկ ժամանակաշրջանում այս նկարագիրը մարդու լավագույն հատկանիշների անվիճելի վկայությունն է։

Հաջիե Ջնդիի ինքնատիպ և խորապես մարդկային նկարագիրը նրան միշտ հիշելու և գնահատելու կայուն հիմք է տալիս։

Շ. Խ. ՄՀՈՅԱՆ
ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ